

Ա. Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Ֆիզիկոզ. գիտ. թեկնածու)

ԱՐՈՎՅԱՆԻ ՈՃՐ ԵՎ ՈՃԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԸ

Արովյանի գրական ու մասնավորապես լեզվական ոճի պարզաբանումը կազմում է նրա լեզվի ուսումնասիրության օրգանական շարունակությունը:

Դեղարվեստական ամեն մի երկի ոճի բնույթ որոշվում է ոչ միայն քերականական նորմաներով, բառերի ու դարձվածքների գործածությամբ, այլ նաև արտահայտչական ձևերով ու ստեղծագործական հնարներով:

Դեղարվեստական յուրաքանչյուր երկ կարելի է ոճական ուսումնասիրության ենթարկել, ունենալով երկու նպատակ՝ զրականադիտական, երբ նպատակ է դրվում պարզել ստեղծագործության մեջ հեղինակի ունեցած մտադրությունները, նրանց դրսևորումը՝ իրագործումը, էֆեկտի ու ազդեցության հարցը, և լեզվական-խոսվածքային, երբ նպատակ է դրվում պարզել, թե հեղինակն ինչպե՞ս է հանդես բերում իր իմաստային նորությունները, ինչպիսի միջոցների ու ձևերի դիմելով, ի՞նչ հնարներ գործադրելով. որով հնարավոր է դառնում շոշափել նաև հեղինակի լեզվական զարգացման տենդենցներն ու ձևերը: Իսկ այս նշանակում է լեզվական ոճը որոշել ուղադրություն դարձնելով թե՛ բառերի ու դարձվածքների գործածության վրա, թե՛ արտահայտչական ձևերի ու ստեղծագործական հնարների վրա և թե մասամբ՝ և քերականական որոշ իրողությունների ուսումնասիրության վրա:

Ընենք կաշխատենք ուսումնասիրել Արովյանի ոճը՝ ունենալով երկրորդ նպատակը:

Վերամբարձ ոճին ու նկարագրական սեթևեթանքին հակադրվելը, հակումը դեպի լեզվի հասարակն ու պարզությունը, պայքարը ֆրադային հոետորականության ու գրական արվեստականության դեմ, խորը զգացմունքայնությամբ և անկեղծությամբ ժողովրդայնությունը գրականության մեջ ներկայացնելը հանդիսացել են Արովյանի ոճի հիմնական տենդենցները:

Արովյանի նախորդների և ժամանակակիցների մոտ ժողովրդայնությունը մեծ դժվարությամբ էր ներթափանցում գրական լեզվի մեջ: Արովյանի ստեղծագործությունների մեջ, ընդհակառակը, ժողովրդայնությունը մտնում է առատությամբ և այն էլ ոչ աստիճանաբար, այլ հեղեղի պես: Ժողովրդայնությունը Արովյանի լեզվի մեջ հանդես է գալիս ոչ որպես ֆոն, այլ իբրև խոսքի բնորոշ ձև՝ մտցնելով արտահայտչական բազմազանություն կազմավորված, բայց դեռևս իր վերջնական ձևավորումը չստացած լեզվի մեջ, հակադրվելով դրաբարյան անկենդան, միապաղաղ ոճին:

Արովյանը կործանիչ հարված հասցրեց գրաբարյան միապաղաղ ոճի կառուցվածքին և ձգտեց գրականության մեջ կենդանացնել ժողովրդական էպիկական ճոխությունը, հասնել արտահայտիչ, ազատ և անխշկանդ պատմելու արվեստին:

Ուրեմն, Աբովյանի լեզվի ոճի էական կողմը նախ և առաջ ժողովրդայնությունն է:

Աբովյանի ոճական առանձնահատկություններից մեկն էլ նրա պարզությունն է, իսկ դրա ակունքը ժողովրդական ստեղծագործությունն է, որը առհասարակ հայտնի է իր լեզվական պայծառությամբ, մտքի խորությամբ ու մատչելիությամբ: Ժողովուրդն իր ստեղծագործության ժամանակ հիանալի կերպով կարողանում է գտնել անհրաժեշտ բոլոր հնարներն ու միջոցները արտահայտելու իր ամենանույր մտքերը: Աբովյանը շատ մոտ էր կանգնած ժողովրդին և նրա առաջին ուսուցիչը հենց ժողովուրդն էր, որից և սովորեց այդ ամենը: Նրա գրեթե բոլոր ստեղծագործությունների մեջ այս կամ այն չափով ներկայում է մտքերն արտահայտելու այն հնարներն ու միջոցները, որոնք առկա են ժողովրդական ստեղծագործությունների մեջ:

Ամենօրյա շփման մեջ լինելով ժողովրդական լայն խավերի հետ, Աբովյանը մոտիկից ծանոթացել է նրանց նիստ ու կացին, սովորություններին, հավատալիքներին, լսել ու սովորել աշխատանքի, հայրենասիրության, սիրո, ուրախության, քաջության, թախծի և վշտի դրույցներ, պատմություններ, սրամիտ դարձվածքներ, առակներ, ոճական արտահայտություններ և այդ ամենը ավել կամ պակաս չափով հետագայում օգտագործել է իր բոլոր գրվածքներում: Նա դրանց միջոցով լրիվ չափով կարողացել է պարզ հայելու մեջ ցույց տալ հասարակ ժողովրդի հոգու և կյանքի ողջ պատկերը, անմահացնել իր ժողովրդի ստեղծած ու հորինած լեզվական, ոճային խորիմաստ գանձերն ու գուհարները և օրինակ տալ հաջորդ սերունդներին:

Չափազանց հարուստ է եղել Աբովյանի բանահյուսական պաշարը: Իրենց ժանրային առանձնահատկություններով Աբովյանի օգտագործած ֆոլկլորային նյութերը մի քանի տեսակ են, որոնցից առանձնապես աչքի են ընկնում ժողովրդական առածներն ու ոճական արտահայտությունները՝ իրենց բազմատեսակ բնույթով, ժողովրդական ու աշուղական երգերը և մասամբ էլ ժողովրդական ավանդություններն ու գրույցները:

Այս ամենի մեջ սակայն, Աբովյանի բոլոր երկերում առանձնապես շատ են գործածված ժողովրդական ասացվածքներն ու ոճական արտահայտությունները, որոնք ունեն տարբեր բնույթ, ինչպես օրինակ՝ օտար և տեղական շահագործողներին ու բռնակալներին, պարսիկ բռնակալներին, խաներին ու հոգևորականներին մերկացնող, աշխատանքային առօրյայի, հայրենասիրության, քաջության, հերոսության, կենցաղի ու սովորության, հոգեբանական, հասկացողությունների ու հավատալիքների, բարոյական-խրատական և այլն:

Ժողովրդական ասացվածքներն ու ոճական արտահայտություններն առհասարակ աչքի են ընկնում իրենց սեղմությամբ ու հակիրճությամբ, որոնք՝ շնորհիվ բանաստեղծական խոսքի այնպիսի առավելությունների, ինչպիսիք են ուրիշ, հանգեր, դեղարվեստական համեմատություններ և այլն, ավելի պատկերավոր են, ավելի հնչուն և ավելի բովանդակալից ու դիպուկ:

Բազմաթիվ են Աբովյանի գործածած ժողովրդական ասացվածքներն ու ոճական արտահայտությունները, օրինակները բերենք միայն մի քանի երկերից:

Ժողովրդական արտահայտություններով և ոճական դարձվածքներով առանձնապես հարուստ է «Վերք Հայաստանին».

«Է՛հ ժամ չի՝ դառավ մեր գլխին, մեկ իշի հարսանիք դառավ» (15), «Քեֆն արամիշ տնել» (16), «Մարդի աչքը շուր ա կտրում» (16), «Գելը ոչխարը տարավ» (16), «Փորս վեց վեց ա անում» (16), «Նրա համար ժամն ու գիլի հարսանիքը մեկ էր» (17), «Սատանի թամբը կորավ» (17), «Վշը մնում էր ցխամր խրված» (17), «Փորումը մեկ այրի կտոր չկար» (15), «Ոտը քարին առնել» (18), «Ել էն ցուրը, էլ էն ջաղացը» (18), «Հատ կարդացողի ծուծը բարակ կրի. զլխումը խելք չի ըլի» (20), «Էդով քարվան չի կտրվի» (20), «Սար ու ձոր տերտերի փոր» (23), «Էշ կերել եմ էշ մենձացել» (29), «Նհախ տեղը՝ դատած մալը ուտիլը ու դարդակ բնիլը հարամ ա» (23) և այլն և այլն։¹

Ժողովրդական արտահայտություններով ու ոճական դարձվածքներով հարուստ է նաև «Պարապ վախտի խաղալիքը».

Բերենք մի քանի օրինակներ. «Հարեն կտրեց» (86), «Կրեմ էդ գլուխդ» (99), «Մեր ախմախ Մուլին էն բոթակն տվեց, որ նախրի իշին կհամարեր էժ» (90), «աղցան արին» (90), «Բայց էն շատ վաղ էր, որ էշը կազ էր» (95), «Էս մահվան գին էր, իշտահի բան չէր» (95), «Քանի փող ունիս, մուկդ երկաթ կուտի» (95), «Զեռդ պակսելիս՝ մաշկի չի դիպչի» (95), «Նորն ընչանք չրգա, հինն իմացվիլ չի» (100), «Խեղճ խանի բանը քիչ քիչ շուր դառավ» (123)՝ և այլն։

Ժողովրդական ոճերով առատ է նույնիսկ «Պատմություն Տիգրանի» մանկավարժական վեպը։

Մյուս գործերից օրինակներ բերելն արդեն ավելորդ է։ Այսքանն էլ բավական է հաստատելու, որ Աբովյանը ժողովրդից վերցրել է բազմաթիվ և տարբեր բնույթի խորիմաստ ու գեղեցիկ արտահայտություններ ու ոճական դարձվածքներ և օգտագործել իր ստեղծագործությունների մեջ, որոնք նյութի նկարագրությունը դարձրել են հետաքրքիր, բովանդակալիս, աշխույժ ու գեղեցիկ։ Ոճական արտահայտությունների օգտագործումը միաժամանակ Աբովյանի ոճին տվել է սեղմություն և պատկերավորություն։

Աբովյանն իր ստեղծագործությունների մեջ օգտագործել է նաև ժողովրդական ու աշուղական երգերը։

Ժողովրդական երգի լավ օրինակ է «Վերքի» մեջ այն տեղը, ուր նկարագրված է ոուսաց գորքի մուտքը Հայաստան։ Հիշելով, որ ամբողջ Երևանը ուրախացել էր, երբ ոուսաց զորքը ներս էր մտել, Աբովյանը գրում է, որ այդ ժամանակ ժողովուրդը «խաղեր էր հանել» և «ասում էին»։ Հենց այդ խաղերից մեկն էլ մեջ է բերում ինքը։

Ժողովրդի հյուսած երգերի օգտագործմամբ, անկասկած, Աբովյանը իր երկերին հաղորդել է նաև թարմություն ու բազմազանություն։

Աբովյանի ստեղծագործությունների մեջ, սակայն, առանձին տեղ են զբաղում ժողովրդական և աշուղական երգերի նմանությամբ հորինած երգերը։ «Նախաշավիղների», «Պարապ վախտի խաղալիքի» մեջ բազմաթիվ նյութերի և ուրիշ գործերի թեմաները Աբովյանը վերցրել է ժողովրդից։ Հիշենք

¹ Խ. Աբովյան—Երկեր, հ. I, Երևան, 1939 թ.

² Նույնը, հ. II.

³ Նույնը, հ. I, էջ 206.

թեկուզ «Ծնողասեր զավակն», «Հոռոցիք», Մոլլա Նասրեդդինին վերաբերող պատմությունները և այլն:

Աշուղական երգերի նմանությամբ է հորինած Աբովյանի հետևյալ բանաստեղծությունը.

«Ջանո՞ւմս ջան չի՝ մնաց, իմ ահվալն՝ քեզ ասեմ.
Բերանս խոսք չի՝ գալիս, որ իմ խիալն քեզ ասեմ.
Թո՞ւի ու թոփխանա ես սարքել, քանդեցիր բուրձ ու բաղանրս.
Յարի պես բճամ եկար, մաշեցիր իմ ջանրս,
Դարդիմանդ ես մի ֆիքր արա՝ ինչպես ըլի էս իմ բանրս,
Ոչովիմեն ումուղ շունեմ, դուն ես իմ ճարն ու դարմանրս, և այլն:

Մեր բերած այս օրինակը ցույց է տալիս, որ Աբովյանը քաջ ծանոթ է եղել նաև աշուղական տեսակի երգերի հորինման արվեստին, որի նմանությամբ բավական հաջողությամբ կարողացել է ստեղծել իր սեփական խաղերը:

Ամենից առաջ Աբովյանը հարազատությամբ է վերարտադրել գուսանական ստեղծագործությունների յուրահատուկ լեզուն ու ոճը: Աշուղական երգերի նման, հենց մեր բերած ոտանավորը գրված է կենդանի խոսակցական լեզվով և համեմված է ժողովրդական բաղմամբիվ մակդիրներով ու անականներով:

Իրենց տաղաչափական արվեստով էլ նրա այս կարգի բանաստեղծությունները համեմատ են աշուղական երգերին:

Իր վանկերի թվով, հատածներով, նույնահանգությամբ և այլ կազմությամբ այս բանաստեղծությունը հիշեցնում է Սայաթ-Նովայի երգերը:

Ինքը՝ Աբովյանը աշուղների լեզուն համարել է «քաղցր լեզու»:

Անկասկած ժողովրդական արտահայտությունների, ոճի, առածների ու երգերի օգտագործումը, բացի իմաստային նորություններ բերելուց, նարստացրել է Աբովյանի լեզուն, ճոխացրել ու պատկերավոր դարձրել նրա ոճը, սահուն ու գրավիչ դարձրել նրա երկերը:

Ժողովրդական բանահյուսության օգտագործումը իր ժամանակին բարձր է գնահատել նաև Միք. Նալբանդյանը:

Մեծ դեմոկրատը այդ համարել է Պերճ Պոռչյանի ստեղծագործությունների կարևոր արժանիքներից մեկը: Հենց «Սոս ու Վարդիթերին» նվիրված նշանավոր «Կրիտիկայում» այդ կապակցությամբ հիշել է նաև հաշատուր Աբովյանին, որին հետևելով ժողովրդական բանահյուսությունը օգտագործել է Պ. Պոռչյանը:

Ահա ինչ է գրել Նալբանդյանը այդ հոդվածում.

«Արգո հեղինակը, հետևելով պ. Աբովյանի ուղղությամբ, իր բովանդակ գործի մեջ (խոսքը «Սոս և Վարդիթերին» մասին է— Ա. Գ.) միշտ աչքի առջև ունեցել է գործ ղնել ազգային առածներ, ասացածներ: Մենք լիասիրտ շնորհակալությամբ ենք հայտնում մեր հեղինակին: Բացի սրանից, «Սոս և Վարդի-

¹ Գրական Քանդալան, Աբովյանի արվիվ. գործ 61.

թերի» մեջ շատ կան սիրուն ձևեր և ոճեր, որոնք գրեթե ամեն տեղ ուրիշ են լինում ազգի մեջ» (ընդգծումը մերն է — Ա. Գ.):¹

Արուվյանը օգտագործել է նաև հարևան ժողովուրդների և հատկապես ադրբեջանական ժողովրդի առաձևերն ու ասացվածքները, մի երևույթ, որ տարածված էր այն ժամանակ հայերեն առօրյա զրույցների մեջ:

Ոմանք կարծում են, թե Արուվյանը ադրբեջանական ֆուլկլորն օգտագործել է «պատմական կոլորիտ ստեղծելու նպատակով»: և «իր հերոսի հոշակը նաև ադրբեջանցիների մոտ» տարածելու միտումով:

Այս ենթադրության հետ մենք չենք համաձայնվում:

Ադրբեջանական ժողովուրդն ունի ստեղծած բազմաթիվ գեղեցիկ և դիպուկ առաձևեր ու արտահայտություններ, որոնց մեծ մասը տարածված և գործածական է եղել հայերի այն ժամանակվա խոսք ու զրույցի մեջ. դրանք միաժամանակ հարազատ և սիրելի են եղել հայ աշխատավորի համար: Արուվյանը, որ այնքան սերտորեն կապված էր իր ժողովրդի հետ և որի բառ ու բանը նրա լեզվական արվեստի համար հանդիսացել է առաջին աղբյուրն ու շտեմարանը, բնականորեն չէր կարող մոռացության տալ ժողովրդի մեջ տարածված և իր սրտին ոչ խորթ ադրբեջանական արտահայտություններն ու ասացվածքները: Բացի դրանից, հնարավոր է կարծել, թե այդ կարգի մի քանի արտահայտություններով Աղասու հոշակը կարող էր տարածվել ադրբեջանցիների մոտ: Մենք կարծում ենք անհնար է:

Արուվյանի համար սիրելի է եղել ժողովրդական բանահյուսությունը, լինի այդ հայկական, թե ադրբեջանական:

Նա դրանով ոչ միայն գեղեցկացրել, դինամիկ է դարձրել իր նյութը, ոչ միայն դրանով հարստացրել է իր բառապաշարը, այլև, միաժամանակ կոնկրետացրել է իր խոսքային արվեստը և դիպուկ ու իմաստալից դարձրել այն:

Այժմ բերենք ադրբեջանական ժողովրդից վերցրած առաձևերի ոճական դարձվածքների մի քանի օրինակներ, որոնք գործածված են Արուվյանի ստեղծագործությունների մեջ. «Քեֆ սանն, բյանդ քյոխվանն» (քեֆը քոնը, գեղը տանուտերինը), «Բիլանա բիր, բիլմիանա մին» (իմացողին մեկ, չիմացողին հազար), «Յուզան շխանն գյոզի չխար» (ճանապարհից դուրս եկողի աչքը դուրս կգա), «Բիր գյորանդա յուղաշ, իքի գյորանդա զարդաշ» (մեկ տեսնելիս՝ ընկեր, երկու տեսնելիս՝ ախպեր), «Էլմը գեն Կիկոն էր, էլմը գեն Կիկոն» (այս առածը քրդական է) և այլն:

Ժողովրդական բարբառները հանդիսանում են Արուվյանի լեզվի բառամթերքի և ոճական արտահայտությունների հիմնական աղբյուրներից մեկը:

Ժողովրդական բառ ու բանի և գեղեցիկ դարձվածքների առատ օգտագործումով Արուվյանը իր ստեղծագործությունների լեզվին տվել է կենդանություն ու պատկերավորություն: Արուվյանը բարբառների օգտագործումով ավելի է անհատականացրել ու կենդանի դարձրել իր կերպարները, հարստացրել իր բառապաշարը հարուստ հոմանիշներով ու գեղեցիկ հարադիրներով, հարբստացրել ու հետաքրքիր դարձրել յուրաքանչյուր երկի բովանդակությունը և ժողովրդական ոգի տվել իր լեզվին:

¹ Միք. Նալբանդյան — «Երկերի լիակատար ժողովածու», հ. 3-րդ, Երևան, 1940 թ., էջ 183:

² Խ. Արուվյան — «Երկեր», հատ. I, էջ 34, 35, 36, 164:

Տեղեկագիր 9 — 6

Աբովյանը երբեմն հավատարիմ է մնացել կյանքից վերցրած կերպարների ոեալ խոսակցությունը և նրանց խոսեցրել մաքուր բարբառով, ինչպես օրինակ, «Լուրցիք»¹ Բերենք մի փոքրիկ հատված:

«Տյեղս կա՛ց, ք՛յրնամ, տյանիցն յաղ պիրեմ,
Հլե հես սհյաթին, յես քյըմյատաղ յեմ,
Ատյա՛ մե՛ր տղյա՛ մեր պյախտը պյանեց,
Շուտով յետ քյըքյամ, հես թըվավորյին
Լյավ հյաշքը պյոնի՛, մնյա հես ծյաոին:
Մեկ քյեաբյաբ յանենք, հյուտենք լյավ պյապյաթ:
Մըհլիկ քյընում յամ, տյու քյիտես լյավ լյատ»:

Սակայն, սխալ է կարծել, թե Աբովյանն առհասարակ գրել է բարբառով: Այս անճիշտ կարծիքը հայտնել են հատկապես «Վերք Հայաստանի» վեպի նկատմամբ:

Գր. Վանցյանի կարծիքով, Աբովյանը գրել է այնպես «ինչպես խոսում են Քանաքեռ գյուղում»²:

«Վերքի» լեզուն այդպես է զնահատել նաև Լեոն, որի կարծիքով Աբովյանը գրել է «իբրև քանաքեռցի»:

Նույն այդ միտքը Լեոն արտահայտել է նաև «Օվսաննա» նովելայի մասին. «Բառերը, նկարագրությունները, շատախոսությունները միևնույնն են, բայց տպավորություն չեն գործում»³:

Զարմանալին այն է, որ այդ անհիմն կարծիքը հայտնել են նաև մեր օրերում:

«Հիրավի,— գրում է Հր. Մուրադյանը,— Աբովյանի «Վերք Հայաստանին» դրված է բուն ժողովրդի լեզվով՝ Քանաքեռի բարբառով»:

Կամ՝ «Վերք Հայաստանի» վեպում, որն աշխարհիկ գրականության մասնիճեստր հանդիսացավ, Աբովյանն անփոփոխ գործ է ածում Քանաքեռի բարբառն այնպես, ինչպես ու խոսում էր այն ժամանակվա Բանաֆեոցի»⁴ (ընդգծումը մերն է— Ա. Գ.):

«Գրաբարը «Նախաշավիղի» մեջ,— գրում է Ռ. Զարյանը,— Աբովյանը փոխարինում է ոչ թե արաբալույան բարբառով, ինչպես «Վերքի» մեջ, այլ մաքուր գրական լեզվով»⁵ (ընդգծումը մերն է— Ա. Գ.):

Կամ՝ «Դրաբարին հակադրելով ժողովրդական լեզուն, Աբովյանը «Վերք» գրական լեզվով շղեց, մի բան, որ նա անպայման կարող էր անել, առաքարսով»⁶ (ընդգծումը մերն է— Ա. Գ.):

Այս անհիմն ենթադրություններից ստացվում է այն, որ Աբովյանի «Վերք Հայաստանին» այսօր էլ կարող է արարատյան բարբառի մի նմուշ լինել: Խնդիրն այն է, որ այդպես կարծողները փորձ չեն կատարել իրար հետ համե-

¹ Խ. Աբովյան—*Երկեր*, հ. 11, էջ 81:

² Գ. Վանցյան—«Հայ հեղինակներ», էջ 14:

³ Լեո—«Ռուսահայ գրականություն», էջ 173:

⁴ Հրայր Մուրադյան—«Նախաշավիղի Աբովյան», էջ 87:

⁵ Նույնը, 93:

⁶ Խ. Աբովյան—*Երկեր*, հ. 1, «Աբովյանի կյանքը», էջ XXXIV:

⁷ Խ. Աբովյան—«Նախաշավիղի», «Առաջաբան», էջ Ը:

մատնելու մի կողմից՝ Քանաքեռի (արարատյան) բարբառն իր բոլոր առանձնահատկություններով և մյուս կողմից՝ «Վերքի» լեզուն իր լեզվական յուրահատկություններով:

Արովյանը երբեք չի ցանկացել գրել այնպես, ինչպես խոսում են քանաքեռցիք: Արովյանը լեզվի վերաբերյալ այդքան սահմանափակ հասկացողություն չունի և իբրև խոշոր մտածող այդպես մտածել չէր կարող:

Այս հարցին անպայմանորեն ճիշտ է պատասխանում Հայկական ՍՍՌԻ ԳԱ իսկական անդամ Ա. Տերտերյանը: Նա գրում է. «Նա (=Արովյանը) ոչ թե լուսանկարել է խոսակցական լեզուն, ոչ թե «ստույգ» վերարտադրել է, ինչ որ սոսկ լսել է, ոչ թե պարզունակ կերպով պատճենել է խոսակցական լեզվի ֆոնետիկան, դրա առանձնահատուկ պակասություններով ու աղավաղումներով, այլ, ընդհակառակը, նա բարբառը, խոսակցական լեզուն ստեղծագործական բուրայի մեջ է առել և գտել ու մաքրել է այն, տալով դրան արվեստի կերի, բանաստեղծական լիցք»¹ (ընդգծումը մերն է — Ա. Գ.):

«Վերքը», որ ավելի հայտնի է իր բարբառային լեզվական ձևերի ու կառուցվածքների առատությամբ, երբեք Քանաքեռի որևէ գյուղացու խոսվածքը չի կարող՝ «մեկը հումուլթ է, մյուսը ստեղծագործական վերամշակություն, իհարկե, պահպանելով ժողովրդական բարբառի համն ու հոտը»:

Այժմ կոնկրետ ուսումնասիրությամբ ցույց տանք, որ «Վերքի» լեզուն բարբառային չէ:

Հենց միայն «Վերքի» չորս էջի վրա Արովյանը գործ է ածել ոչ բարբառային, այսինքն՝ գրական բազմաթիվ բառեր և նույնիսկ նախադասություններ, ինչպես օրինակ՝ սահման, գործ, համբուրեց, միմիայն, հավաքում էր, փրկիչ, բոլոր, օգնություն, գերի ընկավ, ընտիր, խնդրեց, պարգև, ժամանակ, նեղություն, մեծություն, հրաման, կտոր, անվանի, քաջություն, հետ, քաղցր, հարկավոր է, կովկասյան սարը, հորդորելով, հայակապ, աշխարհահռչակ, աղբատ ժողովուրդ, աստիճան, բաղնիսներ, գոռոզությունով, գին, գերօրինակ, նայելով, հալածում, անճարացած, հսկա, տարաբախտ, անպատճառ, ապավինելով, հանկարծ, անպարտելի, հիանալի, անօրինակ, անթիվ բազմություն, կտրիչ ընկեր, կասկած, չի նայում, ընկնում են, գազանների, հիշատակ, գութ, նահատակություն, բարեխնամ, գողադարան, ճաշին, դառն, զարդ, մուխը, ավազակի պես հանկարծ եկան, առյուծի պես իր ժողովուրդն ազատեց, նահակալարար պատասխան է տալիս, արքայական պսակին ու թոշակին (պենսիա) արժանացավ, հարստությունը վատնեցին, փշացրին, հրեղեն վիշապի պես ընկել էին սարերը, որ թշնամու առաջը կտրեն, տեղ չտան, և այլն:

Բացի դրանից, նույն այդ էջերի վրա Արովյանը գործ է ածել նաև գրարձան բառեր ու արտահայտություններ, որոնք նույնպես հաստատում են, որ «Վերքը» բուն Քանաքեռի բարբառը չէ: Օրինակ՝ հայք, ընտանյաղ, որդոց, որդի, քաջասիրտն, իջանի, քաջն, հսկայն, սիրելիաց, հանգիստ ձեր սուրբ սկերացր ով քաջ նահատակը և այլն:

¹ Գրոթ. Ա. Տերտերյան — Արովյանի ստեղծագործությունը, էջ 212:

² Նույնը:

³ Ա. Արովյան — Երկեր, հ. 1, «Վերք» հայաստանի, էջ 144, 145, 146, 147:

⁴ Նույնը:

նույնիսկ նրա դիալոգների մեջ, գյուղացի հերոսների լեզուն զգալի կերպով հեռացած է բարբառից և ունի գրական լեզվի ոչ րիտարներ: Էլ չենթասում վեպի մեջ չափածո մասերը, որ զրեթե զրված են պրական լեզվով: Բերենք մի օրինակ.

Ողջակեզ, անուշ հոտն բարձրացել առ վերինն:
Սև ամպերն հեռացավ, երկնային լիսն իջավ,
Նրանց մարմինն ամփոփեց, պատեց բարձրացավ:
Ու չանկարծ՝ սոսկալի վերևիցը ձեն էկավ:¹

Մեր բերած նատվածի մեջ բարբառային լեզվական տարրերի շատ քիչ կան, լեզուն այստեղ գրական է՝ գրաբարյան տարրերի խառնուրդով:

Այս ամենը ցույց են տալիս, որ չի կարելի առանց որևէ հիմք ունենալու պնդել, թե Արուստի «Վերբը» զրված է բարբառով և նույնիսկ՝ «մաքուր բարբառով»:

Վերբում Արուստին չափովել է հարազատ մնալ բարբառի ողուն, և այդ եղել է նրա հիմնական նպատակներից մեկը: Սակայն այդ երբեք էլ հիմքեր չի տալիս բարբառ համարելու վեպի լեզուն, քանի որ միանգամայն այլ բաներ են՝ ոգին և լեզուն ինքը (բարբառը):

Իսկ եթե «Վերբի» մեջ բարբառային լեզվական տարրերը ավելի շատ են, քան մյուս ստեղծագործությունների մեջ, ապա այդ պետք է բացատրել լեզուն ժողովրդային գարձնելու Արուստի ձգտումով, որը և եղել է նրա հիմնական նպատակներից մեկը: Ինչ խոսք, որ Արուստին շատ ավելի է թերվել դեպի բարբառը, քան անհրաժեշտ էր:

«Վերբով» Արուստին նպատակ է ունեցել իր հարուստ ու նոր մտքերը արտահայտել պարզ խոսակցական և ժողովրդական լեզվով, սակայն երբեք էլ այդ սահմաններում չի մնացել: «Վերբի» լեզուն ժողովրդական է, սակայն արդեն մշակված արվեստի պահանջներին համապատասխան, հղկված զրական լեզվի բազմաթիվ օրենքների համաձայն:

Արուստին իր «Վերբով» նպատակ է ունեցել լեզուն մոտեցնել ժողովրդին, ժողովրդայնացնել ինչպես գրականությունը, այնպես էլ լեզուն:

«Վերբի» լեզուն բարբառային զրական է:

Արուստին ոճին ճիշտ պահպանական չի տվել նաև Շիրվանզադեն, զրեքով՝ «Խաչատուր Արուստինի ոճը ևս չեմ ընդունում զեղեցկության տեսակետից: Դա ժողովրդական կոպիտ բարբառի և զրական լեզվի խառնուրդ է, զուրկ տարրական նորություններից»:

Ռիշտ է, որ «Վերբում» կա արտաքին թափթվածություն, շատախոսություն, շեղումներ և բարբառային լեզվական ֆախտության տեղ-տեղ նույնիսկ դառնում է զերիշխող, սակայն նրա ոճը երբեք էլ չի դառնում աղեղ ու ճապաղ: Հյուսիս, պատկերավոր, նորություններով հարուստ ու բանաստեղծական ոճի լավ օրինակ է հենց բարիկենդանի նկարագրությունը: Հենց ինքը՝ Շիրվանզադեն հիշում է, որ «Վերբը» կարդացել է սիրով և հետաքրքրությամբ:

¹ Խ Արուստին—Նրկեր, հ. 1, էջ 141:

² Շիրվանզադե—«Կյանքի բովից», հ. 1, էջ 182:

«Վերքի» լեզուն բարձր է գնահատել 2. Թումանյանը, անվազելով այն «հրեղեն լեզվով» դրված¹

Վերջապես «Վերքին» (նաև լեզվին) դրական գնահատական է տվել Ստեփան Շահումյանը։ Եթե մեծ ունեություններ հիշում է, որ «վերքին օրերս շատ եմ ներշնչվում նրանով», «սրբազան ոգևորությամբ է լցվում կարգացող սիրտը», որ այն «ամբողջովին բանաստեղծության ու անկեղծ ոգևորության արտադրություն է», ապա այդպես ասել է նաև նրա համար, որ Արուսյանի լեզուն ու ոճը թե՛ գեղեցիկ են և թե՛ հետաքրքիր։

Արուսյանի լեզվին բնորոշ և առանձնահատուկ է զգացմունքայնությունը, և հենց այս նկատի ունենալով է, որ Ստ. Շահումյանը իր մի նամակում գրել է. «Ահա ձեզ մի գրվածք (խոսքը «Վերքի» մասին է — Ա. Բ. Բ. որ ամբողջովին «հեղինակի արցունքով է շաղախված»։

Այդ զգացմունքայնության մեջ առանձին ուժով երևում է հեղինակի լեզվական ու ոճային նրբությունը, իսկ այդ նրբությունները նա կարողացել է արտահայտել Թումանյանի արտահայտությամբ «հրեղեն լեզվով»։

«Վերքը» հարուստ է խոհական ու լիրիկական զեղումներով։ Վեպի հիմնական շաղախը հույզն է, հուզականությունը։ Վեպի մեջ լիրիկական շեղումները երկին տվել են յուրահատուկ կոլորիտ։ Այդ շեղումները իր բնթերցողներին ազդելու և համոզելու համար են։ Արուսյանի մաս լիրիզմը ուժ է ստանում լեզվի բանաստեղծացման միջոցով։

«Պատմություն Տիգրանի» մեջ չկան «Վերքի» շեղումները, և վեպն աչքի է ընկնում իր կուռ կառուցվածքով։ Սրա լեզուն արդեն ավելի գրական է, բան «Վերքին» և հաղթահարված է ումանտիկական ոճի ազդեցությունը։ Ոճի բարբառայնությունն այստեղ հասցված է միևնույնի, և լեզուն բավականաչափ ազատված է կրկնություններից ու ավելորդություններից։

Արուսյանի երկերի մեջ բավական բարձր է գեղարվեստական լեզվի պատկերավորությունն ու հուզական արտահայտչականությունը։ Նա իր արտահայտիչ լեզվով կարողացել է երբեմն չափազանց նուրբ կերպով երանգավորել մարդկանց հոգեկան տարրերի վիճակներն ու ապրումները։

Արուսյանի ոճական առանձնահատկություններից մեկն էլ նրա անկեղծությունն է, վեպի նկարագրվող երևույթներն ու առակները։

Նկարագրվող յուրաքանչյուր առարկային կամ դեպքին Արուսյանը տվել է զգացական երանգավորում։ Եվ «սրտի արյունով» գրելը, որ ընդունում են շատերը, հենց այդ է նշանակում։

Արուսյանը յուրաքանչյուր նկարագրություն իր բնթերցողին ներկայացնում է պայծառությամբ և հարազատությամբ։ Հենց այդ է պատճառը, որ բնթերցողը կարողանում բարիկենդանի նկարագրությունը, կարծում է թե ինքն էլ է մասնակից, նրա ձմռան նկարագրությունից կարողացողը ակամա ցուրտ է դգում, նրա պատկերագրած ծխամած խրճիթից կարգացողին թվում է թե ծխի հոտ է տոնում², թուրքի աղջկանն ուղղած ջերմ, հուզումնալից ու ցավակցական տուրբի կարգալույց, բնթերցողն ակամայից մասնակից է դառնում հե-

¹ Թումանյանը քննադատ, էջ 203, 395, 116, 133.

² Արս. Սևկերյան — «Ստեփան Շահումյանի գրական հայացքները», էջ 159.

³ Խ. Արուսյան — Երկեր, հ. 1, «Առաջ-բան», էջ XXXIII.

դիմակի վշտին, և այս ամենը նրա համար, որ Արտվյանը տիրապետում է խոսքային միջոցներին և նկարագրում է անկեղծությամբ:

Արտվյանի լեզուն ուժեղ է, ազդու և տպավորիչ: Նա հիանալի կերպով կարողանում է գրավել և ոգևորել իր ընթերցողներին, ստիպել, որ նաև խորհի ու մտածի իր նման, ապրի ու տրամադրվի իր նկարագրություններով: Նա իսկական ժողովրդական գրող էր:

Արևելահայ աշխարհաբար լեզուն աչքի է ընկնում իր մի շարք առանձնահատկություններով. նրանով կարելի է արտահայտել ամենախոր դալությունը, ամենանուրը և քնքույշ մտքերը, նրա միջոցով կարելի է բանեցնել թունամոլը և ոչնչացնող սարկազմ, աշխուժություն բերող յուժուր և այլն, և այլն:

Արտվյանը եղավ առաջին հեղինակը, որ կարողացավ ո՛չ միայն տեսնել մեր նոր լեզվի այդ բոլոր հնարավորությունները, այլև՝ գործնականում բանեցնել դրանք:

Ինչպիսի գայրույթով ու ցասումով է գրել «Հախմբմազի գովքը».

Հոգին փշվել գառել էր գունդ ու կծիկ,
Մարմինը հոտել, էլիլ ինչպես գոմշու տի՛կ,
Ոչ հոգին էր մոռտառ գոտ գալիս,
Ոչ հոգեհան հոտած պարկին ձևո տալիսս:¹

Նույնպիսի գայրույթով է խոսել «Վերքի» մեջ բռնակալ Հասան-խանի մասին, նրան անվանելով՝ «արինակեր», «ծանոթ», «գարլան» (վաղը), «ավերիչ», «կատաղած», «անամոթ» և այլն:

Ոճական միանգամայն տարբեր հնար է գործադրել «Վերքի» մեջ, օրինակ՝ Քաղոհո՜ւ՝ պարսիկների կողմից փախցնելու, հայերի գաղթի, Աղասու մահվան և այլ տեսարանները: Այսպիսի նկարագրությունների ժամանակ Արտվյանն օգտագործել է այլ որակի բառեր, նկարագրություններ տվել է լիրիկական շունչ և գործադրել է տարբեր հնար:

Հոգևորականության մասին խոսելիս նա արդեն գործադրել է յուժուրը. խակ երբեմն էլ՝ սարկազմը:

Արտվյանը գրել է դրական բոլոր ժանրերով և տեսակներով. նա գրել է և՛ էպիկական, և՛ դրամատիկական, և՛ լիրիկական ժանրերով, որոնց համապատասխան էլ ընտրել է յուրաքանչյուրին անհրաժեշտ արտահայտչական ձևերը, յուրաքանչյուրին անհրաժեշտ լեզվական միջոցներն ու հնարները:

Գրելով միանգամայն տարբեր բնույթի գործեր, ինչպես օրինակ՝ գեղարվեստական, պիտական, մանկավարժական, մանկական և այլն, դրանով իսկ Արտվյանը ցույց է տվել, որ նոր-արևելահայ աշխարհաբար լեզուն ի վիճակի է բավարարելու դրանցից յուրաքանչյուրին առանձնահատուկ պահանջները:

Առաջին անգամ Արտվյանն է փորձում մեր նոր լեզուն օգտագործել ճկունություն ու մտքի խորություն պահանջող բարդ մտքերի (գիտության, լեզուների տեսական ուսումնասիրության, փիլիսոփայության և այլն) արտահայտման համար:

Ինչ վերաբերում է Արտվյանի հրապարակախոսական գործերին, ապա պետք է ասել, որ դրանք ավելի աչքի են ընկնում նրանով, որ ունեն ուժեղ,

¹ Խ. Արսլյան — Երկեր, հ. 11, էջ 163.

մտրակողական և սննդաշնող ողի, որն ստեղծվում է խորիմաստ և ներգործող-
աղողող համապատասխան բառերի բնորոշյամբ:

Արուվյանի ոճական առանձնահատկություններից մեկն էլ յուրահատուկ
պատմելաձևն է. նա հաճախ իր պատմելիք նյութը բնդհատում է, խոսում իր
ընթերցողների հետ, կատարում «գեղումներ», սակայն հենց այս դեպքում էլ
նա վարպետորեն է պահպանում նյութի սյունեկային և կոմպոզիցիոն միաս-
նությունը:

Հայտնի է, որ այս պատմելաձևը Արուվյանից առաջ, եթե չասենք տա-
րածված, դոնե բնդունված ձև էր ուսու դրականության մեջ: Հենց այդ ձևով
է ստեղծագործել Պուշկինը իր հռչակավոր «Ուլգինի Օնեգինը»: Իր այդ պատ-
մելաձևով անկասկած Արուվյանը կապվում է ուսու դրականության հետ:

Արուվյանի ոճական բնորոշ մյուս առանձնահատկությունն էլ հիպերբոլա-
ներով պատմելն է. նա ունի ո՛չ միայն հիպերբոլիկ արտահայտություններ
(«աչքերն էին իրանց աղի ծովը բաց թողնում», «ջահիլ քսան տարեկան հար-
սը էր գլխիս ծեծում, քարդում, մազերս քրքրում», «երեսներին սաղ տեղ
չկար, բոլոր ճղել, քրքրել էին», «արինը լաչակ, օշմաղ, ճակատ, դո՛ւ չիլի
պես ներկել էր», «ուզում էր դռը պոկի», «էնպես ծվաց, ծղրտաց որ ձենը
երկինքը հասավ, պատերը զրզնդացին», «կեսուրը հինգ դազ ծուլ էլավ»,
«սիրտը դուս ճոթեց», «տոները դարաղի աշ դրած կաշի էր դառել և ալյն, և
ալյն»), այլև առանձին նկարագրություններ ու տեսարաններ, ինչպես օրինակ,
Թադուհու առեանդման տեսարանը «Վերքի» մեջ:

Չափազանցություններով ավելի հարուստ է «Վերքը», սակայն Արուվյանի
մյուս ստեղծագործություններում նույնպես առկա են հիպերբոլիկ արտահայ-
տությունները:

Արուվյանի ոճի մեջ այս հիպերբոլաները նույնպես ժողովրդական ծագում
ունեն: Հայտնի է, որ բարբառներում խոսքն ավելի կենդանի և ազդեցիկ
դարձնելու համար խոսողները շատ հաճախ են դիմում չափազանցություննե-
րի, առհասարակ խոսացած դույներով որևէ դեպք ներկայացնելը հարուկ է
ժողովրդական լեզվին:

Դժվար չէ նկատել, որ Արուվյանից մեր բերած հիպերբոլիկ օրինակների
մեծ մասը դործածական է ժողովրդական բարբառներում և ունի ժողովրդա-
կան ծագում: Այս հանդամանքը ևս վկայում է, որ նրա ոճին բնորոշ այս ա-
ռանձնահատկությունը նույնպես դալիս է ժողովրդից:

Արուվյանի լեզվի համար խիստ բնորոշ են բառակուտումները: Նա հա-
ճախ միևնույն նախադասության մեջ նույն պաշտոնով դործ է ածել իրար
նկատմամբ համադոր և համարժեք բաղմակի ենթականեր, ստորոգյալներ և
լրացումներ:

Այդ տեսակետից շատ ավելի աչքի է ընկնում «Վերք Հայաստանին»:

Ելժմ տեսնենք, թե ի՞նչ կարգի բառերի կուտակումներ է կատարել Արու-
վյանը, նախադասության ո՞ր անդամներն է ի՞նչ նպատակով:

Արուվյանի լեզվական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա եր-
բեմն կատարել է դործող կամ հղող առարկայի—ենթակայի կուտակում, ինչ-
պես օրինակ.

¹ Խ. Արուվյան—Երկեր, հ. 1, էջ 48—49:

«Ղուշ, գաղան, անասուն, սողուն... փեղացել, էստեղ, լնդեղ վեր էր բնկել»¹

Արուվյանի լեզվի մեջ, սակայն, շատ սովորական և խիստ տարածված են ստորոգյալների կուտակումները:

«Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին՝ լնպես էր մեյդան բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ համփորթի քիթն ու պոռնգը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փետացրած, համփից խրոկում, սար ու լուր քցում, խեղդում կամ քարեքար տալիս»²

Նախադասության լրացում երկրորդական անդամներից ավելի շատ կուտակում է կատարել ձևի պարագայի: Ուրեմն, Արուվյանի համար կարևոր է եղել ոչ միայն կատարվող գործողության արտահայտումը, այլ նաև այդ գործողության ու եղելության կատարման ձևը: Բազմաթիվ ձևի պարագաներ գործածելով և առաջադրել իրար նկատմամբ համազոր և համարժեք բազմաթիվ անդամներ գործածելով, Արուվյանը իր լեզվական ոճի մեջ անպայմանորեն մտցրել է ակտիվություն, մեծ աշխուժություն և դինամիզմ:

Երեք մեկ օրինակ դարձյալ «Լերքից».

«Ամենը հո ամենը, իլլահիմ մեռ տեռ Մաբկոսը, որ առավոտից մինչ րիգուն փիլոնն ուսին քցած, փոխանը վեր քաշելով, հողաթափը ծրփծրփացնելով կամ քոշերը քսքստացնելով, քուցին քուցին անելով, մեկ դադանակ ձեռին, լոնդի տերողորմեն շխկշխկացնելով, բուշեքը շափելով, մեկ մեռել, կամ կնունք, շիլափլավ, կամ մատաղ պատահելիս՝ մեկ էլ էն ես տեսնում, որ հազալով, փռշտալով՝ ոտին, գլխին անելով՝ դոները ջարդելով, կոտրատելով ափալ թափալ ներս ընկավ, հոգեառ հրեշտակի պես եկավ թունդրի դրաղը կտրեց, իրան իրան նստեց, արաղ մազա ուզեց ու հենց իմանաս՝ թե մեռելի կես հոգին ինքն ա ուզում հանի»:

Այս հատվածի լեզուն իր ոճական առանձնահատկություններով բնորոշ է հատկապես «Լերքի» համար: Յուստով և տեղ տեղ սարկազմ բանեցնելով Արուվյանն այստեղ քննադատել է գյուղական տերտերին, նրա թափափվածությունը, անկույտությունը, նրա ընշարազդությունը:

Արուվյանն այնուհետև ավելի է խտացրել և ուժեղացրել իր քննադատությունը, հիշելով տերտերի անգրագիտությունը, անհոգի և անխիղճ լինելը, եսասեր և եսամոլ լինելը և վերջապես՝ նրանց «նհախ տեղը՝ դատած մալլ ուտիլը ու դարդակ քնիլը», որ «հարամ ա»:

Մեր այս հատվածում Արուվյանը բանեցրել է իր այնքան սիրած կրկնությունների մեթոդը: Կրկնություններ է արել ոչ միայն ձևի պարագաների կամ ստորոգյալների, այլ նաև նախադասության ուրիշ անդամների, ինչպես օրինակ՝ ամենը... ամենը», «քուցին քուցին», «ափալ թափալ», «իրան իրան» և այլն: Բացի դրանից, այս հատվածում, ինչպես առհասարակ մյուս ստեղծա-

1. Արուվյան - Երկեր, հ. 1, էջ 13:

2. Նույնը, էջ 13:

3. Նույնը, էջ 23:

4. Նույնը:

գործութիւնների մէջ, Արուսեանը գործածել է այնպիսի բառեր, որոնք իրար նկատմամբ իմաստով տարբեր և կամ մոտ են, բայց որոնք հարադիր մեկ բառի նշանակութիւնն ունեն։ Մեր բերած հատվածում այդպիսի բառեր են՝ «առավոտ ընդուն», «ծփծփացնել քսքստացնել», «մեռել կնունք», «շիւափլամ մատաղ», «նազալով փոշտալով», «ոտին գլխին», «ջարդելով կոտրատելով», «եկավ կտրեց» և այլն։

Սրանք էլ յուրահատուկ կրկնութիւններ են, որոնք ոչ պակաս չափով աշխուժացնում, խտացնում են արտահայտած միտքը և աշխույժ ուժով տալիս նախադասութեանն ու պարբերութեանը։ Հենց սրանով պետք է բացատրել, որ յուրաքանչյուր ընթերցող «Վերքը» կարդալիս, կարծում է թէ Արուսեանը այդ երկը, և ոչ միայն այդ երկը, գրել է հատուկ չափով։ Տեղ-տեղ, նույնիսկ, թվում է թէ չափածո բանաստեղծութիւնն էս կարդում։

Ավելի համոզելու համար, բերենք մեկ ուրիշ օրինակ նույն «Վերքի» արձակ մասից՝ ըստ հանգերի կազմելով տողեր։

«Անշախ մի անշախ իրար բոթբոթելով,
համեցեք անելով, կունից թևից քաշելով. տուն ընկան։
Օրհնյալ է աստված, փառք հավիտյանս չամիչ,
սրտըներս ընկավ տեղը,
մատրներն ընկավ եղը.
աքլորին բարձեցին գեղը
ու կուզրկուզ անելով՝ մտան տաք տեղը։
Նամարդ ըլի՝ ով շասի,
աստված վերջը խեր անի։
Արի՛ հմիկ գոմի դռանը կանգնինք
ու մեր քեղխուլեքանց քեֆին թամաշ անինք»¹ և այլն։

Այսպես կարելի է չափածոյի վերածել ամբողջ վեպը և այդ նրա համար, որ Արուսեանը գրել է հատուկ ուժով, նույնիսկ հանգեր ստեղծող բառերի հատուկ ընտրութեամբ։

Ոճական այս ննարը հատուկ է ոչ միայն «Վերքին»։ Արուսեանի մյուս գործերն էլ գրված են այդպէս։ Բերենք մեկ օրինակ ուրիշ գործից։

«Սելը ճռռաց, ամպը գոռաց,
հոր ու ախպոր ջանք դողաց,
մեր ու որդոց աչքը սառեց,
ջուրն անօրեն՝ որսը ճարեց,
դաշտին գնաց, էլ եղ վազեց,
էլ եղ բացվեց, էլ եղ խփվեց,
նենգավոր ջուրն թուրը սրեց,
Դոշը ետ տարավ, սելին գրկեց,
որ չի վախեց ու սիրտ արեց,
նրա դուխը անզգուշ կոխեց։

¹ Խ. Արուսեան—Երկեր, հ. 1, էջ 38.

Կատաղած գետն մեկ էլ խշշաց,
մեկ էլ արինն աչքը կալած՝
լափին (ղալիս) տվեց,
ձեռք մեկնեց՝

Մեր բերած այս մեջբերումը, որ նույնպես վերցված է Աբովյանի արձակից («Հունացնություն աշխարհի այգին Ղորղանով») և մեր կողմից տրված չափածոյի ձև՝ հեղինակի ստեղծած չանգի ու չափի համապատասխան, կրկին անգամ հաստատում է մեր այն ասածը, թե Աբովյանի նույնիսկ արձակ գործերը գրված են հատուկ ուղիղով, որ դրանցից յուրաքանչյուրը կարծես մի ծավալուն չափածո երկ է, որին համապատասխանեցրել է լեզուն:

Անպայմանորեն սա Աբովյանի ոճական իմաստական առանձնահատկություններից մեկն է:

Ինչքան էլ Աբովյանը իր բառակազմակերպումներով ու չափազանցություններով տուրք տար ռոմանտիկական ոճին, այնուամենայնիվ մի բան անպայմանորեն ուշադրության արժանի է և գնահատելի: Աբովյանը հենց այդ բառակազմակերպումներով ու չափազանցություններով հակադրվել է կլասիցիզմի տրաֆարետային, չափ ու կշռի տակ վերցրած ոճին, խախտել չափի ու ձևի սխալաստիկ բմբռնումը, որը մթագնում էր բովանդակությունը և պահանջում էր օրինակ վերցնել ժողովրդական ստեղծագործություններից, որոնք պատմվում են ազատ, անկաշկանդ, պարզ ու մատչելի: Ընդօրինակելով ֆոլկլորային աչք ձևին, Աբովյանը նույնպես իր մտքերն ու զգացմունքները արտահայտել է ազատ արվեստով և օրինակ տվել հաջորդներին:

Պետք է իմանալ, որ ժողովրդական բաբբառները գերծ շեն չափազանցություններից, և այս բանը Աբովյանի լեզվի մեջ ավելի ժողովրդական ծագում ունի: Ուշադրության արժանի է նաև այն, որ Աբովյանը հիպերբոլայի է դիմել ավելի այն ժամանակ, երբ ուրախությունը կամ վիշտը անհաստական-անձնական չէ, այլ ընդհանուր-համատարած և վերաբերում է բոլորին:

Աբովյանը սակայն ամեն դեպքում չէ, որ դիմել է չափազանցությունների. նա դրան դիմել է, երբ նկարագրվող նյութը կամ դեպքը ունեցել է ժողովրդական բնույթ: Ժողովրդի նման Աբովյանն էլ չափազանցությունների է դիմել իր բնթերցողներին ազդելու և համոզելու նպատակով:

Աբովյանը երբեմն էլ վարվել է ճիշտ դրան հակառակ կերպով, ասինքն, տեղ-տեղ՝ նայած նյութին, պատմել է զուսպ և ժուժկալ, ինչպես օրինակ, գաղթի տեսարանի նկարագիրը «Վերքում»:

Աբովյանը իր հերոսներին տիպական ու պլաստիկ է դարձրել նաև լեզվականորեն, խոսելու միջոցներով: Նրա կերպարներից յուրաքանչյուրն ունի յուր առանձին բառապաշարը, յուր խոսելու եղանակը և այս տեսակետից անպայմանորեն նրա հերոսները անհատականացված են:

Առհասարակ Աբովյանը կարողանում է իր հերոսներին ուժին օրիգինալ երանգավորում տալ:

Այսպես՝ «Վերքի» մեջ Տեր Մարկոսի լեզուն աչքի է ընկնում դրամարյան բառերի գործածությամբ, իր «միտոտ, ճոթոտ, ճղլանի, քաջախոտ» ձայնով:

¹ Խ. Աբովյան — Երկերի լիակատար ժողովածու, հ. 4-րդ, էջ 224 — 225:

² Խ. Աբովյան — Երկեր, հ. I, էջ 46:

տանուտերի լեզուն՝ խոսելու հրամայական տոնով, «անատամ բերանին» հատուկ արտասանությամբ,¹ քեղիտղաներինը՝ «քյոնդալանա» խոսքով — ընդմիջելու, շեղակի որևէ բան ասելու եղանակով՝ գզիր 'ուստանի լեզուն՝ իր արագախոսությամբ ու «զիլ ձենով», և այլն:

Լեզվական ոճի հնարներից կարելի է հիշել նաև բառագործածությունը:

Արժանի երբեմն օգտագործել է իր ժամանակի լեզվական ֆոնդը, այն ժամանակվա սովորական լեզուն: Այդպիսի դեպքերում նա գործածել է տարատեսակ և տարբեր բնույթի բառեր՝ առանց անջատելու — խառն, որի մեջ երևում են բառային տարբեր շերտեր՝ և՛ գրաբարյան — բարձր ոճի, և՛ գրական, և՛ բարբառային — ժողովրդական, և՛ սենտիմենտալ ոճի, և՛ օտարազգի, մի խոսքով՝ տարբեր կարգի բառեր: Իսկ դրանով (տարբեր տեսակի և բնույթի բառերի խառն գործածությամբ) Արժանի առանց իր բացասական հերոսներին ենթարկել է յուժնորի:

Բերենք մեկ օրինակ. «Դռները ջարդելով, կոտրատելով՝ ափալ թափալ ներս ընկավ (Տեր Մարկոսը) հոգեառ հրեշտակի պես եկավ թունգրի դրադր կտրեց, իրան իրան նստեց, արադ մազա ուզեց ու հենց իմանաս՝ թե մեռելի կես հողին ինքն ա ուզում հանի: Դեռ պատանը չկարած, չվացրած, շուտով թաղումեկքն ու կողոպուտն ա ուզում. աստված հո չի՝ վերցնի: Տո՛ մեկ արի ձեռա բռնի՛ր, հոր պես ինձ սիրտ դի՛ր, ինձ անուշ լեզվով մխիթարի. ետո հոգիս էլ հետը հանի՛ է՛, թե որ շտամ, պատժի գամ: Մեկ հացկերույթ ըլելիս՝ սուփրի գլխին ինքն ա նստում, հինգ մարդի դդար հաց ուտում, տկի հոտն առնելիս, փորը ղլվլոց ընկնում»:²

Տեր Մարկոսի կոմիկական ֆիգուրան Արժանի ներկայացրել է տարատեսակ բառերի անմիջական խառնումով: Այստեղ կան մաքուր գրական բառեր (ջարդել, կոտրատել, կողոպուտ, մխիթարել, հոտ և այլն), գրաբարյան, կրոնական բնույթի բառեր (հոգեառ, թաղումեկք, հացկերույթ, պատան, աստված, հոգի և այլն), բարբառային-ժողովրդական բառեր (թոնգիր, անուշ, ըլել, փոր, ղլվլոց և այլն), օտարազգի բառեր (ափալ թափալ, դրադ, մազա, սուփրա, դդար և այլն):

Տարբեր տեսակի բառախմբերի խառն գործածումով բացասական կերպարներին յուժնորի ենթարկելը կազմում է Արժանի լեզվական ոճի հնարներից մեկը:

Արժանի լեզվական այդ ոճով չի ներկայացրել իր դրական կերպարներին. նրա ոճն այս դեպքում արդեն փոխվում է և նկարագրության համար ընտրում և գործածում է մեկ խմբի բառեր, կամ համարյա մեկ խմբի բառեր, այն է՝ ժողովրդական կենդանի լեզվի մեջ գործածական սովորական բառեր: Արժանի այս դեպքում չի ոճավորում գրաբարյան, նեղ օտարազգի և այլ կարգի գործածությամբ. այսպիսի դեպքերում նույնիսկ նրա գործածած օտարազգի բառերը միայն ծագումով օտար են, նրանք շատ սովորական-գործածական են բարբառներում, և այդ իմաստով էլ նրանք արդեն օտարազգի չեն:

¹ Նույնը:

² Նույնը:

³ Նույնը, էջ 28.

⁴ Նույնը, էջ 23.

Ահա, նա այսպես է ներկայացրել իր սիրած կերպարի՝ Աղասու նկարագիրը:

«Նրա աննման, գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձենը, նրա լեն թիկունքը, բարձր ճակատը ու ոսկեթեփ ճալվերը՝ մարդի խելք էին տանում, տեսնողը մաթ էր մնում, չէր կշտանում: Սազը ձենն առածին պես, քարին, փետին՝ շունչ, հոգի, լեզու էր տալիս: Ղորդ ա, արևեն երեսն էրել, գունը փախցրել էր, ամա ծիծաղելիս՝ որ աչք ու ունքը չէր բաց անում, հենց իմանաս՝ վարդ է բաց ըլում, երեսիցը լիս վեր թափում»:¹

Աբովյանը այստեղ արգեն գործ է ածել այնպիսի բառեր, որոնք ամբողջապես գործածական են ժողովրդական լեզվի մեջ, իսկ մեծ մասը՝ միայն ժողովրդական լեզվի մեջ: Այդպես չէր բառերի ընտրությունը Տեր Մարկոսի նկարագրության մեջ:

Աբովյանի լեզվա-ոճային հնարներից մեկն էլ այն է, երբ նկարագրության համար ընտրում է սովորական-գործածական բառեր, օգտագործում զուգահեռ կերպով ներկայացվող ամբողջական նկարագրությունների համար նրանց հակադրելով իրար: Այդպես է ներկայացրել Ֆառաշների և Աղասու ուժի նկարագրությունը, Աղասու փոքրաթիվ զորքի և Հասան-խանի մեծաթիվ զորքի կոնֆլիկտը և այլն:

Աբովյանի ստեղծագործությունների վրա նկատելի է նաև կլասիցիզմի, սենտիմենտալ ոճի ազդեցությունը: Նա տեղ-տեղ ոճավորել է սենտիմենտալիզմի խոսքին բնորոշ ձևով, 18-րդ դարի կլասիցիզմի ոճով գրված ստեղծագործությունների ոգով:

Թերեք մեկ օրինակ «Վերքից».

«Մնացե՛ք բարով՝ ա՛յ մեր խեղճ ազգ հա՛, էլ մի լաք, ողբաք, ցավիք մեզ վրա: Սրբեցե՛ք աչքներդ, տեսե՛ք մեր հալը, էլ ի՞նչ օգուտ մեզ ձեր սուգն ու լալը: Թուրը գլխներիս, մահն առաջներիս, կրակն էրելիս, շամփուրն ծակելիս, բոցն խորովելիս, մեր հոգին տալիս, մեր կեան փոթոթված, կեան անձող դառած, մեր ոտներն մոխիր, շնչերս կրակված, մեկ ձեռք կտրած, մյուսը քերթած, պղինձն զլխներիս, քարփիչն ոտներում, սրտներումս արին, արտասուներն աչքումս. ո՛չ երկինքն փուլ գա, ո՛չ հրեշտակ տեսնի, ո՛չ դահիճն ցավի, ո՛չ երկիրն ճղվի: Դուք Ք՛ւր եք լալիս, որ մենք չենք լալիս, դուք ո՞ւր մղկտում, որ մենք չենք խնդրում: Պահեցե՛ք ձեր սուգն սև օրի համար, ձե՛զ վրա լա՛ց էլե՛ք, ու տեսե՛ք ձեր ճար: Մենք մեր ծնորսց հետ կմիանանք, էս օր նրանց տեսուն մենք կարժանանանք, էս դառն աշխարհիցս կհանգստանանք, դրախտը կերթանք ու միշտ կխնդանք»:

Այստեղ կլասիցիզմի, սենտիմենտալ ոճին հարազատ է ոչ միայն իմաստը, ոգին և բնույթը, այլև՝ դործածված են այդ ոճին հարազատ բազմաթիվ բառեր ու կապակցություններ, ինչպիսիք են. խեղճ, լաք, ողբ, սուգ, ցավ, մա՛, էրել, ծակել, խորովել, հոգի տալ, փոթոթվել, կրակված, քերթած, արին, արտասուք, հրեշտակ, դահիճ, մղկտալ, սև օր, դրախտ և այլն:

Անկասկած, այստեղ մենք չենք գտնում կլասիցիզմի ոճը անխախտ կերպով, նրա քարացած կանոններն ու յուրահատուկ սկզբունքները. այստեղ բա-

¹ Խ. Աբովյան - Երկեր, հ. 1, էջ 26.

² Նույնը, էջ 140.

ցահայտ են նկատելի և զգալի շեղումները կլասիցիզմին անհրաժեշտ կանոններից: Սակայն, միաժամանակ, անուրանալի է կլասիցիզմի, մասնավորապես ոճի ազդեցությունը: Նախ՝ կլասիցիզմին է հատուկ իրար հետ մրցող «քարեկամ», «երկնային», «ավետաբեր», «հրեշտակ» և այլ ածականներով ու մակդիրներով գովերգելը Պասկելիչին՝ որպես պատմական անձնավորության: Այստեղ զգացվում է գոեհիկ, կոպիտ բառերի ու դարձվածքների սակավությունը, ոճի որոշ վերամբարձությունը, դիցաբանական պատկերների և անունների գործածությունը, որոնք հատուկ են կլասիցիզմին:

Ուշադրության արժանի է նաև բառապաշարի դիֆերենցիացիան՝ կապված նկարագրվող նյութի հետ:

Արուվյանի գործածած բառերը՝ համապատասխան նրանց բնույթի, կարելի է բաժանել մոտավորապես հետևյալ խմբերի.

Հոգևորականություն. տանուտերների և ֆեդխուղաների համար՝ գրաբարյան, կրոնական, հարստության — վայելքի իմաստ ունեցող բառեր. օրհնյալ եղերուք, իշխանք, նավակատյաց, ավետարան, Աստվածաշունչ, Շարական, Սաղմոս, Այսմավորք, փիլիսոփա, վարդապետ, ննջեցելոց, հոգիներ, քոշք ու սարեն (պալատ), անմահական բարություն, զառ, զալամքար, քուրք, սամուր, օշմաղ, յախութ, քահրրբար, մարջան, խանզադա, բեկզադա, լիսահոգի, ջավահիր և այլն:

Հասան խանի, ֆառաշների և պարսիկ բռնակալների համար՝ բռնության, շարիքի, նողկանքի իմաստ արտահայտող բառեր. արինակեր, դանջղ, դարաշի, հարբա, ջինգլանություն, հրաման, քանդել, գողդողալ, զարզանդել, ջարդել, գող, ավազակ, թույն և այլն:

Բարիկենդանի, ծեսերի, տոների, կենցաղի, դրական կերպարների համար՝ սովորական բառեր, մասնավորապես ժողովրդական բառեր. հողաղ, երթիկ, ջահել, էտել, ջիրիդ, խաբար, օջախ, բյուրուլ, շաղ (ցող), հանդ, թոնթորալ, աչք ու ունք, գուն, ուխտ, սեր, կյանք, աշխատանք, գործ և այլն:

Հասարակական աղետների. Աղասու կամ դրական ուռև կերպարի մահվան և մասամբ էլ ոռոսական գործի հրամանատարների համար՝ սենտիմենտալիզմին, կլասիցիզմին հատուկ բառեր. ողբ, կական, հրեշտակ, խոցվել, քավել, դահիճ, մղկտալ, երկնային, դառնածեծ, դառնաղետ, ոճիր, դժնի, ժանտ, նահատակ, համբառնալ, տվայտանք, տանջվել, խորովվել, և այլն:

Ոճական ուշագրավ հնարներից մեկն էլ պատկերներն են ու համեմատությունները: Նախ, պիտի նկատենք, որ առհասարակ Արուվյանին հաջողվում է ստեղծել գեղեցիկ պատկերներ և բնորոշ համեմատություններ, իսկ պատկերներն ու համեմատությունները գեղեցիկ խոսքի կարևոր միջոցներից են, խոսքային համապատասխան միջոցները, որոնց շնորհիվ գեղեցիկ, հետաքրքիր, բովանդակալից ու նպատակասլաց է դառնում խոսքը:

Արուվյանի լեզվին առանձին հմայք ու կենդանություն են տալիս պատկերներն ու համեմատությունները:

Արուվյանը այս դեպքում նույնպես դեմ է գնացել կլասիցիզմի ոճին, ստեղծելով վերացականությունից ու անառարկայությունից հեռու, ոչ ինքնանպատակ, կոնկրետ ու պարզ պատկերներ: Պատկերները Արուվյանի մոտ սերտորեն կապված են նկարագրվող առարկայի կամ երևույթի հետ, որի

շնորհիվ էլ առարկան կամ երևույթը դառնում են զգացողական և արտահայտիչ:

Քերենք գեղեցիկ պատկերի մի նմուշ.

Շրիկնահովն ընկել էր, թող ու դուման բերդի շորս կողմը բռնել, էսպես վախտին դուշն էլ իր բնիցը չի՝ դուս գալիս, բայց սաղ աշխարհն էկել՝ Երևանու բերդի շորս կողմը բռնել էր, ուրն ջիվան Աղասու խաթեր, որը նրա մեյիդը դուս բերելու, շունքի լսել էին՝ որ մուզիկով ու դոնշունով պիտի թաղեն ու էսպես բան, էսպես տեսարան՝ Երևանումը դեռ առաջինն էր: Սալդաթ ու մուզիկանդ բերդի դուռը կտրել էին, ժանդարմները ճամփա էին բաց անում: Համամների ու սուրբ Սարգսի դուզը էնպես էր սեխն, սպիտակին տալիս ու դես ու դեն ծփում, ինչպես մի փրփրած ծով, որ քամու ձեռին՝ յա սիպտակ փրփուրն ա կիտով, կիտուկ քարին, ապառաժին խփում, յա սև ջուրն ա դրմբալով դես ու դեն քցում: Թողն էլ հո բոլորը թամամ էր անում»¹

Անկասկած յուրաքանչյուր ընթերցող կարդալով այս հաջողված նկարագրությունը, երկար ժամանակ կպահի իր հիշողության մեջ: Այս պատկերն ավելի բովանդակալից, տպավորիչ ու անմոռաց է դառնում նրա մեջ եղած գեղեցիկ և դիպուկ համեմատությամբ:

«Վերքի» մեջ բարիկենդանի նկարագրությունը ընդարձակ և հիանալի պատկերի շատ հաջողված օրինակ կարող է հանդիսանալ:

Արովյանի լեզվի մեջ առանձնապես շատ են համեմատությունները:

Արովյանին հաջողվում է գեղեցիկ և հարմար համեմատություններ ստեղծել: Այսպես, Երևանի բերդը համեմատում է հազար գլխանի դեղ հետ, Հասան-խանին համեմատում է կատաղած դարլանի (վագրի) հետ, մարդկանց խառնիխուռն բազմությունը համեմատում է դես ու դեն ծփացող, մի փրփրած ծովի հետ, Աղասու աչք-ունքը համեմատում է բացվող վարդի հետ, զարդարված կանանց համեմատում է դարնան վարդի հետ, Թագուհու փախցնելու լուրը ամպի տրաքոցի, թոփ ու թոփխանի ձենի հետ և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, Արովյանի մոտ համեմատությունները տարբերվում են իրենց բնույթով՝ համապատասխան համեմատողի բնույթի. դրական հերոսների և հաճելի երևույթների համար ընտրել է լավ համեմատություն, իսկ բացասական կերպարների և անցանկալի դեպքերի համար ընդհակառակը:

Արովյանի լեզվին առանձնապես դեղեցկություն է տվել համապատասխան էպիտետների գործածությունը: Անկասկած դրանով նրա ստեղծագործությունների լեզուն ավելի է դարձել հյութեղ, որովհետև բառ-էպիտետների միջոցով է, որ Արովյանը դունավորել է ուշադրության կենտրոն հանդիսացող առարկան կամ երևույթը: Բառ-էպիտետների միջոցով հարստանում է ընթերցողի երևակայությունը, խոսքը դառնում է պատկերավոր, իսկ պատկերները խորը և ամբողջական:

Ինորոշ և հաջողված էպիտետներ շատ կան, բերենք միայն մի քանի օրինակներ: Արովյանը գրաբարով գրված դասադրքին աշակերտի բերանով տալիս է «մուռտառ» էպիտետը, ծեծող վարժապետին՝ «անաստված», «չար ուստա»: Աղասու արտաքին նկարագրության համար Արովյանը գործ է ածում

¹ Խ. Արովյան—Երկեր, հ. 1, էջ 214.

հետևյալ էպիտետները՝ սուրամի բոյ, բուխ բուխ աչքեր, դալամով փաշած ունքեր, անճման, գեղեցիկ պատկեր, անուշ լեզու, փաղցր ձեն, լեն թիկունք, քաբուր ճակատ, ոսկեթել ճալվեր, շահել, քիվան, օրսուտար և այլն:

Արուվյանի գործածած էպիտետները մեծ մասամբ գալիս են ժողովրդական ստեղծագործություններից, կենդանի խոսվածքից, և այդ մանավանդ այն ժամանակ, երբ պետք է լինում քնորոշել առձրկանները (իրենց հատկանիշներով) և գործողությունները:

Բնության նկարագրության տպավորությունն ավելի ուժեղ դարձնելու համար, Արուվյանը կատարում է որոշիչ-ածականների կուտակում, դրանով իսկ խտացնելով գույները, տուրք տալով շափագանցության. օրինակ. «ղամշող» կայծակ, մրրած ամպեր, ամպակալած, սիրտ հոթոող երկինք, մխոտ, ճոթած, ճղլանի, փացախած ձեն և այլն:

Արուվյանի լեզվի մեջ հաճախ բառերն իրենց իսկական իմաստով չեն գործածված. նրանք հաճախ սիմվոլիկ և ալեգորիկ բնույթ ունեն. նրա մոտ, օրինակ «բերդ» բառը երբեմն ունի ստրկության իմաստ, իսկ «գետը»՝ ազատության:

«Լուսահոգի արջին քրքրեցին» նախադասության մեջ լուսահոգի բառը ալեգորիկ իմաստ ունի, և այդ բառը գործ է ածել նկատի ունենալով կրոնական հավատալիքները:

Ալեգորիկ իմաստ ունի «օսերը ծնեցին» արտահայտությունը հետևյալ նախադասության մեջ. «Ընչանք, ծեքը բացվեց, օձերը ծնեցին», այլ կերպ ասած՝ շատ դժվարությամբ անցավ գիշերը, որովհետև այն սոսկալի ծանր և անտանելի էր:

«Չաղ ու Լղալի» բառերը գործ է ածել հարուստ իմաստով:

Առհասարակ, կրոնական որոշ տերմիններ Արուվյանը գործ է ածել հեղինական, քննադատական իմաստով, ինչպես օրինակ՝ «փորի արքայություն», «սուրբ սոխ կարթալ», «սաղմոսը զսրաղ ասել» և այլն:

Արուվյանին հաջողվում է ստեղծել գեղեցիկ և աշխույժ տրամախոսություններ: Հաջողված դիալոգների լավ օրինակ է «Նաղարկություն մանկանց» գրվածքը:

Նրա մոտ դիալոգները գյուղացիական անփոփոխ խոսակցություններ չեն, ինչպես կարծում են ոմանք. նույնիսկ նրա գյուղացի հերոսների տրամախոսությունները Արուվյանի գրչի տակ ստացել են ինչպես պոետական, այնպես էլ գրական ձև:

Արուվյանը չի պատմում միապաղաղ, նրա հեղինակային պատմողականությունը հաճախ փոխվում է տիպերի խոսակցության և այստեղ արդեն ժողովրդական լեզուն գտնում է առավել լայն ու ազատ կիրառում:

Արուվյանը տուրք է տվել նաև ռոմանտիզմին. այդպիսի դեպքերում անհրաժեշտաբար դրան համապատասխանել է նաև ոճը:

Ռոմանտիկական ոճին հատուկ են՝ իրականությունից հեռու հիպերբոլան, սիմվոլիկան, վերամբարձությունը, տիպերի դրական ու բացասական բեռումը՝ նրանց հակադրումով:

1 Տե՛ս «Վերքի» երկրորդ դիտի առաջին երկու էջերը

2 Խ. Արուվյան—Երկեր, հ. I, էջ 180.

3 Նույնը, էջ 29.

Այս բոլորի տարրերն էլ մենք պտնում ենք Աբովյանի երկերում: Հիպերբոլան, որի մասին մենք արդեն խոսել ենք, կապվում է նաև նոմանտիզմի հետ: Գրական այդ ուղղության մեջ հիպերբոլան իր էությունը տարբերվում է ժողովրդական կենդանի լեզվի մեջ գործածվող չափազանցություններից:

Ռոմանտիկական ոճի ազդեցությամբ պետք է բացատրել «Վերքի» կին հերոսների ծաղկուն ոճը: Աղաաու կինը իր ամուսնուն դիմում է հետևյալ ոճով.

«Ո՛ր սարերն են առաջդ կապել, որ դետերը մամիեդ կտրում, որ ձեռն ա թնիցդ բռնում, եդ քաշում՝ ա յ իմ թազ ու պարծանք, որ էսպես ինձ կրակում թողել ես, ինձ դժոխքը դրկում, դու արքայաժյուներ վաշելում, ինձ սուրը բաշում, դու ձեռներդ լվանում, ինձ դիվանանոցը տալիս, դու հրեշտակների միջին արևիդ ձեռն տծում ու երեսդ էլա շես եդ դարձնում, որ ինձ հողը պնես: Ա՛ղասի ջան, Աղասի. երար սիրտդ քար ա դառել, երաբ աչքդ ծաղիկ ու թուփ էլ չի՝ տեսնում, երաբ երեսդ մի երկնքին չե՛ս քցում, որ տեսնիս՝ թե ի՞նչ մորած ամպ՝ ես առաջիդ կանգնած, ի՞նչ կրակ է վերելիցը վեր թափում: չե՛ս իմանում միթե՝ ա՛նիբա՛վ, ա՛նջիգյար՝ թե էս կրակն ու էս բոցը, էս ծուխն ու էս ամպը՝ իմ բերնիցն են դուս դալիս, իմ սիրտս ա քույա քույա իրանից հաչում, վերեն աստղերը խավարացնում, բռնում, ներքև սար ու ձոր պապանձացնում, անձող շինում»:

Այսպիսի ծաղկուն խոսելու ձևն ունի նաև Աղասու մայրը:

Սակայն հենց այստեղ էլ Աբովյանի ոճը ռոմանտիկականից բաժանանալու հետևանք է նրանով, որ հերոսուհու խոսքն այստեղ ունի ո՛չ թե վերացական իմաստ, որը հատուկ է ռոմանտիզմին, այլ կոնկրետանում է բնության օրինակներով ու առարկայական-շոշափելի տեսարաններով: Ռոմանտիզմին հատուկ պատիվ ու ջերմոցալին ոճի դիմաց մենք այստեղ ունենք լեզվական ակտիվ ու բնական ոճ՝ որոշ վերացականությամբ ու ճոռոմությամբ խառն:

Նկատենք, որ ստեղծագործական այդ նարը ծաղկուն ոճով ստեղծագործելը) խորթ չէ նաև ժողովրդի համար:

Առհասարակ նրա նկարագրությունները վերացական չեն և կոնկրետ լինելով հանդերձ՝ ներկայանում են դինամիկ փոփոխում:

«Վերքի» հերոսը՝ Աղասին ռոմանտիկ կերպար է. նա հանդես է գալիս իբրև ուրիշի հատուկ ծրագիրն իրականացնող. հեղինակը նրան օժտել է այնպիսի բարեմասնություններով, որոնք բնորոշ ու հավանական չեն, բայց որոնք անհրաժեշտ նախադրյալներ են հեղինակի առաջարկած ծրագիրն իրագործելու համար:

Աբովյանի կերպարները նույնպես որոշ իմաստով բեկեղացված են. նրանք կամ զրական են և լրիվ զրական (Աղասի, Կարո և այլն) և կամ բացասական են և ամբողջապես բացասական (Հաւան-խան, Ֆառաշներ և այլն): Աբովյանի «շար» ու «բարի» այդ հերոսները գործում են իրար հետ, իր ստեղծագործությունների մեջ նրանք զարգանում են զուգահեռ կերպով և խիստ կերպով հակադրվում են իրար՝ թե՛ իրենց արտաքինով, թե՛ հոգեբանությամբ, բնավորությամբ և թե՛ գործունեությամբ:

Մի երևույթ նույնպես ուշադրության արժանի է:

¹ Յ. Աբովյան—Երկեր, հ. 1, էջ 174:

Աբովյանի դրական և բացասական հերոսներն ունեն տարբեր ոճ: Մինչդեռ առաջինները խոսում են բանաստեղծորեն, շքեղ ու գեղեցիկ, ափսոսելիք էրկրորդները բացասականները՝ խոսում են դռնհիկ ու տգեղ:

Խումանտիկական ոճի բնորոշ օրինակ կարող է հանդիսանալ «Վերքի» վերջին տեսարանի՝ Աղասու թաղման նկարագրությունը:

Այստեղ կան թե՛ իրականությունից հեռու չափազանցություններ, թե՛ վերամբարձություն, թե՛ խորհրդավորություն և թե՛ սիմվոլիկա:

Աբովյանի ստեղծագործությունները գերծ չեն նաև լեզվական և ոճային նատուրալիզմից, որը գերազանցապես հանդես է եկել պրականության և կրթված հասարակության մեջ անգործածական, անվայելուչ բառերի ու արտահայտությունների գործածությամբ:

Աբովյանը գործ է ածել նատուրալիստական այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ քամակ, քած, շան որթի, կռտել, ոռք, ոռր, ոռ անել, զթուկացնել, դուռումսաղ, տոհաշություն, զկռտալ, փորը զնալ, զոռալ, քթի ցելթուկ, լաշար, տարթ և այլն: Նատուրալիստական այդպիսի բառեր ու արտահայտություններ ավելի շատ գործ է ածել «Իշի հարսանիքը» գրվածքում, ինչպես օրինակ՝ «... վարժատուն տեսնելիս՝ ականջները կախ ա քցում ու շնթում», «Մոլի ալոշի տակն էլ քոր էկավ», «վարժապետի քամակն էլ ա քոր գալիս», «էս տոհաշություն էր», «Ի՛նչ ես ականջներդ իշի պես թափ է թափ տալիս», «պոչ ու անկաջ թափեթափ տվին, ձգվեցին, պորտ ու քամակ զլեցին ու մեկ կուշտ փորով... զռացին»¹ և այլն:

Լեզվա-ոճային նատուրալիզմ կա նաև «Վերքի» մեջ:

Սակայն նկատելի է, որ Աբովյանը աշխատել է նվազեցնել նատուրալիստական բառերի և արտահայտությունների գործածությունը: Հենց այդ է հաստատում «Վերքի» ձեռագրերի համեմատումը: Նկատելիորեն «Վերք Հայաստանի» վեպի սևագիր օրինակում Աբովյանը ավելի շատ էր տուրք տվել նատուրալիզմին:

Բերենք մի քանի օրինակներ.

«Վերքի» առաջին ինքնագրի մեջ Աբովյանը դրել է.

«Էծը մկրկում, կովը բառանշում, ֆորթը բղավում, որը ցռում էր, որը շռում, որը կվում, որը թրքում, որը ֆստացնում, որը փստացնում...»:

Երկրորդ, մաքրագիր օրինակում Աբովյանը միանգամայն իրավացի կերպով հանել է նատուրալիստական այդ բառերը և այդ միտքը ձևակերպել այսպես. «Էծը մկկում, կովը բառաշում, ֆորթը բղավում, որը փստացնում, որը վզզացնում, որը բզզացնում, մյուս բաները չեմ ասում, ամոթ ա»:

Նկատելի է, որ Աբովյանը նատուրալիստական բառեր ու արտահայտություններ ավելի շատ գործ է ածել այն ժամանակ, երբ մեկն իր փառարքով խիստ ազդել և գրգռել է իրեն՝ առաջացնելով խորը զայրույթ և հակահրանք:

Այսպիսով՝ Աբովյանի լեզվի ոճի ամենաէական հատկանիշը նրա ժողովրդայնությունն է: Աբովյանը ձգտել է, որ գրականության լեզուն լինի պարզ

¹ Գրական թանգարան, Աբովյանի աբխիվ, գործ 6-ր, էջ 34—35. անս նաև Խ. Աբովյան—Երկերի լիակատար ժողովածու, հ. 4-րդ, էջ, 47—54:

² Գրական թանգարան, Աբովյանի աբխիվ, գործ № 1, էջ 20:

³ Նույնը, էջ 74:

Հասկանալի է խիստ կերպով պայթարել է խրթնաբանության և պաթետիկ-մի գեղեցիկ:

Արտվյանի յազդին և ուժին բնորոշ է պարզությունը և անկեղծությունը:

Մենք կերպ աշխատել է գրել այնպես, որ հասարակ «ռամիկն» էլ կարգաւ և հասկանաւ: Թերեւս այդ է պատճառներից մեկը, եթե ոչ գլխավորը, որ Արտվյանը հենց իր «Կերթի» մեջ գրական ձևերի փոխարեն, կամ նրան օգտագործելու շատ հաճախ գործ է ածել բարբառային ձևերը և դրանով իսկ հասել մյուս ծայրահեղությանը:

Իր «Պարզ» վախճանի խաղալիքի մեջ նա խիստ կերպով քննադատում է խրթնաբանությունը:

«Ես խոր խոսալուցն ո՛վ ինչ կիմանա,

Ես սողին էլ՝ միշտ հասկացող պտի,

Թե չէ փուլ քամին կառնի, կտանի»¹

Մենք արդեն ասել ենք, որ Արտվյանի լեզվական տեսական սկզբունքներից մեկն էլ այն էր, որ պահանջում էր գրել այնպես, ինչպես լսում և խոսում են ուսուցիչ խոսակցության մեջ: Իմ այդ սկզբունքը առաջինը փորձեց կենսագործել ինքը:

Արտվյանը ամուր քելերով կապված էր իր ժողովրդի հետ և առաջինը մեր գեղարվեստական գրականության պատմության մեջ առատորեն օգտագործում է ժողովրդական բանահյուսությանը, ժողովրդի բառ ու բանը, ոճական արտահայտություններն ու դարձվածքները, ժողովրդական երգերն ու աշուղական ստեղծագործությունները:

Արտվյանը օգտագործել է նաև հարևան ժողովուրդների և առաջին հերթին ադրբեջանական ֆոլկլորը:

Արտվյանը բազմաժանր դրող է: Նա գրել է վեպ, բանաստեղծություն, նովելա, դրամա, երգիծական գործեր, ֆելիտոն, օրագրություն, հրապարակախոսություն, նամականի, դիտության տարրեր ճյուղերին վերաբերող հոդվածներ ու աշխատություններ՝ մանկավարժական, պատմագիտական, ազգագրական, լեզվագիտական և այլն: Այս բոլորին պետք է ավելացնել նրա թարգմանություններն ու փոխադրությունները, որոնք նույնպես շատ կոպիտով նման են ինքնուրույն ստեղծագործությունների: Ստեղծագործությունների այս տարրեր սեռերն ու տեսակները պահանջում էին լեզվական տարրեր միջոցներ, բայց էության՝ «տարրեր» լեզուներ:

Թարգմանների օգտագործումով Արտվյանը նպատակ է ունեցել ժողովրդայնացնել լեզուն, տիպական ու բնորոշ դարձնել խոսքը, ոճավորել հերոսների, հարստացնել բառապաշարը, լեզվի մեջ մտցնել բազմաձևություն, զինամիկ ու ճկուն դարձնել խոսքը:

Արտվյանը մաքուր բարբառով չի գրել ոչ «Կերթը» և ոչ էլ սրեւ, այլ գործ:

Արտվյանը իր ստեղծագործությունների մեջ մտցրել է ժողովրդական սպի, ժողովրդի ոճն ու շունչը:

Արտվյանի բառապաշարը ինքնատիպ է և հոխ, թեև տեղ-տեղ պարզվում է բառապաշարի նեղ-տեղական սահմանափակվածություն: Նա գրաւ միջոցով նույնպես անհատականացրել է իր կերպարները և տիպականացրել դրանք:

¹ Խ Արտվյան՝ Երգեր, հ. 11, էջ 28:

Արուվյանը մերժեց արտահայտման և նկարագրության նախկին հայտնի ա միապաղաղ բնույթը, որը աչքի էր ընկնում իր շարունակաբար ցած չափերում, և հակադրվելով դրան, ցույց տվեց բազմաթիվ ու բազմաձև, բայց խոսուն ու ներգործուն էպիտետների օգտագործման անհրաժեշտությունն ու ձեռք-

Արուվյանի ոճական առանձնահատկություններից է նիպերբույաներով և ալեգորիաներով պատմելը, բառակուտակումները և շափաղանջությունները, որոնցով մեծ մասամբ կապվում է ժողովրդի և նրա լեզվի հետ:

Արուվյանը դեմ էր արխայիկ ոճին, հլափցիզմի վերամբարձ ու փրան արտահայտություններին, թեև ինքը նույնպես հաճախ առաք է ավել գրանշկարողանալով միանգամից հաղթահարել անցյալի ժառանգությունը:

Նրա լեզուն տեղ-տեղ անմիջապես է, խառնաբղետ:

Արուվյանի լեզվի ու ոճի մեջ կա նատուրալիզմ, սակայն այդ բնորոշ չնա դրան դրման է միայն որոշ դեպքերում և նկատելիորեն աշխատել է նվազեցնել այն:

Արուվյանը ստեղծագործել է հատուկ ուղիով. տեղ տեղ նրա նույնիսկ արձակ ստեղծագործությունները ունեն շափածոյի բնույթ:

Իր լեզվաշինարարական ձգտումների մեջ Արուվյանը իր առաջ տեսնում էր լեզվի զարգացման ու ճոխացման երեք հիմնական ուղիների՝ ժողովրդական բարբառները, գրաբարը և օտար լեզուները: Սրանցից յուրաքանչյուրը ավել կամ պակաս չափով, հանդիսացել է որպես հարուստ գանձարան. որից լեզուն պետք է վերցնի այն ամենը, ինչ անհրաժեշտ է լեզվի զարգացման. ճոխացման համար, ավելի ճկունություն, արտահայտականություն և պատկերավորություն ստեղծելու համար: Բայց մենք այստեղ տեսնում ենք, որ Արուվյանը ավելի է տարվել բարբառներով, քան անհրաժեշտ էր, թեև նա գրա հետ միասին տեղ տեղ ցուցաբերել է քննադատական վերաբերմունք: Մի կարծի կարծել թե Արուվյանը առանցարակ կատարել է խոռոչախոռոչ այնպիսի փոխառություններ, որոնց առատությունը և պատահականությունը խախտել է դեղարվեստական երկերի օրգանական, ոճային միասնությունը և խզում առաջ բերել իր երկերի լեզվի և ժամանակի գործածական լեզվի մեջ. մի բան սակայն պարզ է, որ Արուվյանը շատ ավելի թեքվելով գեղի ժողովրդական կենդանի լեզուն, դրանով մասամբ նա հեռացել է ազգային միասնական գրական լեզուն: առաջ տանելու իր ձգտումից:

Նրա կենտ նպատակն էր այնպես անել, որ լեզուն լինի պարզ, հասկանալի ու մատչելի հայ ժողովրդի հոգ գանգվածներին, իր արտահայտությամբ՝ ճշարիտ հազարներին:

Պատկերավոր ապա՝ Արուվյանի լեզվի հենքը ժողովրդականն է. բայց նրա վրա խիստ նկատվում է վարպետ ձեռքի ոճը, շեղումն ու միջոց է պատճառը, որ ամեն մի ընթերցող նրա մեջ տեսնում է և՛ բարբառը, և՛ ոչ բարբառը:

Արուվյանի լեզուն կենդանի է, արտահայտիչ, հարուստ և լիարժեք և ոչ թե մեռած, պրոսային կամ պավառական-բարբառային:

Նկարագրվող յուրաքանչյուր կերպարի, դեպքի կամ երևույթի համար նա օգտագործել է տարբեր բնույթի բառեր: Բառագործությամբ ոճավարելը կապվում է Արուվյանի ոճական առանձնահատկություններից մեկը:

Ինդիկիկ պատկերներով ու բնորոշ համեմատություններով նա կարողա-

զել է գեղեցիկ, հետաքրքիր, բովանդակալից ու նպատակասլաց դարձնել խոսքը: Դրանց միջոցով Լեռովյանը հարստացրել է արտահայտության ձևերը, պարզ դարձրել խոսքը և բազմաձևություն մտցրել արտահայտության ձևերի մեջ:

Հետաքրքիր և աշխույժ են Լեռովյանի տրամախոսությունները:

Լեռովյանը երբեմն տուրք է տվել ումանտիզմին և կլասիցիզմին, տեղ-տեղ կրելով նրանց ոճական ազդեցությունները: Սակայն նա նույնիսկ այդպիսի դեպքերում եղել է ազատ և խոսքը կոնկրետացրել է բնության օրինակներով ու առարկայական-շոշափելի տեսարաններով, ոճը դարձրել է ակտիվ ու բնական. խախտել է կլասիցիզմի ոճի քարացած կանոնները և բաղմաթիվ տեղեր շեղումներ կատարել նրանից: